

ԵԳԻՊՏՈՍ

Առողջապահության բնագավառում համագործակցության համաձայնագիր է ստորագրվել 1997թ. մայիսի 10-ին, Երևանում:

Ստորագրող կողմերն են ՀՀ առողջապահության նախարարությունը և ԵԱՀ առողջապահության և ազգաբնակչության նախարարությունը:

Համագործակցության շրջանակներն են.

- տեղեկությունների, փորձի, մասնագետների փոխանակություններ, մասնակցություն միմյանց գիտական միջոցառումներին, համատեղ գիտական աշխատանք,
- ուղղակի համագործակցություն բժշկագիտական հաստատությունների միջև,
- տեղեկությունների, առողջապահական, վիճակագրական տվյալների, համաճարակաբանական հաշվետվությունների փոխանակություն,
- թերապևտիկ և անհետաձգելի վիրաբուժական օգնություն երկու երկրների քաղաքացիներին՝ հյուրընկալող երկրի քաղաքացիների համար գործող կարգի համապատասխան,
- հիվանդների բուժում վճարովի հիմունքներով՝ ուղարկող երկրի ուղեգրի հիման վրա: